նը՝ քաղաքապետ, իսկ գիւղինը՝ քեօֆխայ (շժա)։

Հայաստանի զինուորական, դատական եւ նոյնիսկ եկեղեցական բաժանումներն էլ — պէտք է ենթադրել — համապատասխանում են վարչական յիշեալ բաժանումներին։ Մասամբ այդ նպատակով է անուշտ, որ Շահամիր եանը վերականգնում է քոր-եպիսկոպոսների կամ գաւառական եպիսկոպոսների պաշտօնը, որ վաղուց արդէն վերացած էր մեր եկեղեցու մէջ. օրինակ, եկեղեցում աղմկող կամ անկարգութիւն անող հոգեւորականին նա յանձնում է գաւառի եպիսկոպոսի դատին (յկ)։

Այսպիսով իւրաքանչիւր նահանգական քաղաքում, բացի եկեղեցական իշխանութիւնից, գտնւում են հետեւեալ 4 «Մայրագոյն իշխանները» — նահանգապետը կամ իշխանը, բերդապետը, զինուորական պետը եւ մայր դատաւորը (շժը)։

Որովհետեւ, ըստ հեղինակի, չափազանց կարեւոր է նահանգապետի կամ իշխանի պաշտօնը, ուստի աւելորդ չենք համարում մի քիչ աւելի ծանօթութիւն տալ նրա մասին։

Իշխանը ընտրւում է Ազգ. ժողովում եւ նրա անդամներից, 3 տարի ժամանակով։ Ամբողջ Հայաստանի համար ընտրւում է 60 իշխան (իը), որից պէտք է ենթադրել, որ երկիրը բաժանւում է ոչ թէ 20 նահանգի — ինչպէս այդ տեսնում ենք «Ցորդորակ»ի մէջ — այլ 60։ Կամ գուցէ իւրաքանչիւր նահանգը բաժանւում է 3 մասի, որոնցից իւրաքանչիւրը նոյնպէս նահանգ կամ աշխարհ է կոչում հեղինակը։

Իշխանը կառավարում է իրեն յանձնուած նահանգը երեք խորհրդակիցներով, որոնց ընտրում է ինքը նահանգի ազգաբնակութեան միջից։ Նա է նշանակում իր գաւառապետներին, քաղաքապետներին եւ գիւղապետներին։ Նրան են ենթարկւում նահանգի բոլոր իշխանութիւնները, անգամ կառավարական կոլեգիաների այն անդամները, որոնք գտնւում են նրա նահանգում։ Նրան է ենթարկւում զօրքը, որը թէեւ ունի իր առանձին զօրագլուխը (ճկդ)։ Նոյնիսկ դատարանը, որ ըստ Շահամիրեանի՝ շատ մեծ իրաւունքներ է վայելում, նա եւս ենթակայ է իշխանին. այսպէս, քրէական դատերի ժամանակ իշխանը դատարանում բազմում է ամենապատուաւոր տեղում եւ որպէս դատարանի գերագոյն նախագահ, ինքն է կարդում դատավճիռը (շէ)։

Կարճ. իշխանը նահանգում նոյն իրաւունքներն ու լիազօրութիւններն է վայելում, ինչ որ հանր. նախագահը ամբողջ երկրում. «Ամենայն իշխան ի վերայ քաղաքաց ընդ երեսս բոլոր վիճակի իւրոյ ունիցի զօրութիւն իբրեւ նախարարութեան» (ղբ)։

Այդ մասին աւելի լրիւ գաղափար տալու համար բերենք քաղուածօրէն իշխանի ընտրութեան եւ վաւերացման հրովարտակը.—

«Ընտրեցինք քեզ իշխան Երեւան մայրաքաղաքի եւ Արարատեան աշխարհի, երեք տարի ժամանակով։ Քեզ իրաւունք տուինք ընտրելու Արարատեան աշխարհից երեք օրէնսգէտ մարդիկ քեզ խորհրդակիցներ, երեք տարի ժամանկով, քիչ հետ միասին Արարատեան երկիրը կառավարելու համար։ Քեզ իրաւունք տուինք գաւառապետութեան եւ գիւղապետութեան իշխանութիւն տալու Երեւանի ամբողջ վիճակում։

«Պատուիրում ենք քեզ՝ քաղցրութեամբ հաւաքել օրէնքով սահմանուած հարկը, մաքսը, հասը, բաժինը Արարատեան աշխարհից եւ մտցնել հայոց տան գանձարանն ու չտեմարանը։ Պատուիրում ենք քեզ Երեւանեան վիճակի գանձարանից ամսէ-ամիս հատուցանել քեզ յանձնուած նահանգի զօրքի ու զօրապետների ռոճիկները։

«Քեզ իշխանութիւն տուինք պահելու բոլոր գաւառներում վարպետներ, որ տղաներին ու աղջիկներին գրել-կարդալ սովորեցնեն «հայոց տառին եւ բառին», ինչպէս եւ զինուորութեան արհեստը տղաներին սովորեցնելու։

«Պատուիրում ենք քեզ, որ հացով լցնես մեր չտեմարանները՝ նահանգիդ ազգաբնակութեան երկու տարուան պաշարի համար։

«Պատուիրում ենք քեզ, տարուան չորս եղանակներին ներկայացնել Ազգ. Ժողովին նահանգիդ մուտքի եւ ելքի հաշիւը, ինչպէս եւ համարը բոլոր ծնածների ու մեռածների, նոյնը ներկայացնելով եւս մի անգամ տարուան վերջին։

«Քեզ իշխանութիւն տուինք աքսորելու